Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2018 ԹՎԱԿԱՆԻ 12 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժին

2018թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում սովորում են ընդհանուր թվով 771 սովորողներ, այդ թվում.

- **Ակադեմիայում՝** 657 սովորող, այդ թվում՝ մագիստրատուրայում՝ 58 սովորող, որից առկա անվճար ուսուցմամբ՝ 16 սովորող, հեռակա ուսուցմամբ՝ 42, իրավագիտության ֆակուլտետում՝ 325 սովորող (առկա անվճար ուսուցմամբ բակալավրիատում՝ 117, իսկ առկա վճարովի ուսուցմամբ՝ 208), հեռակա ուսուցման ֆակուլտետում՝ 274 սովորող,
- **Քոլեջում՝** 78 սովորող,
- **Ուսումնական կենտրոնում՝** 36 սովորող (2018-2019 ուստարվա 2-րդ հոսք):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ավարտել են ընդհանուր թվով 393 շրջանավարտներ, այդ թվում.

– **Ակադեմիայի մագիստրատուրան՝** առկա անվճար ուսուցմամբ 11 շրջանավարտ, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 24 շրջանավարտ,

– **Ակադեմիայի բակալավրիատը՝** իրավագիտության ֆակուլտետը՝ առկա անվճար ուսուցմամբ՝ 34, առկա վճարովի ուսուցմամբ՝ 45, հեռակա ուսուցման ֆակուլտետը՝ 37 շրջանավարտ,

– **Քոլեջը՝** 62 շրջանավարտ,

– **Ուսումնական կենտրոնը՝** 180 շրջանավարտ (2017-2018 ուստարվա 2-րդ և 3-րդ հոսքեր, 2018-2019 ուստարվա 1-ին հոսք):

Հաշվետու ժամանակաշրջանում կրթահամալիրից ազատվել է ընդհանուր թվով 60 սովորող (48-ը՝ ակադեմիայից. 11-ը՝ մագիստրատուրայից, 10-ը՝ հեռակա ուսուցման ֆակուլտետից, 10-ը՝ իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցումից, 17-ը՝ իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցումից, 6-ը՝ քոլեջից և 6-ը՝ ուսումնական կենտրոնից):

Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրում ուսումնառության են վերականգնվել ընդհանուր թվով 19 սովորող, որից 2-ը ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման բակալավրիատում, 11-ը՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման բակալավրիատում, 4-ը՝ ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետում, 2-ը՝ քոլեջում:

2018թ.-ի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողներից «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» առաջին, երկրորդ, երրորդ աստիճանի մեդալներով պարգևատրվել են 15 ծառայող և 1 սովորող, որից 10 ծառայող, 1 սովորող՝ երրորդ աստիճանի մեդալով, 3 ծառայող՝ երկրորդ աստիճանի մեդալով և 2 ծառայող առաջին աստիճանի մեդալով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողներից ոստիկանության հերթական կոչում է շնորհվել թվով 31 ծառայողի, որից 9 ծառայողի՝ ոստիկանության կրտսեր խմբի հերթական կոչում, 16 ծառայողի՝ ոստիկանության միջին խմբի հերթական կոչում և 5 ծառայողի՝ ոստիկանության ավագ խմբի հերթական կոչում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի 82 սովորողների շնորհվել է ոստիկանության հերթական կոչում:

Նույն ժամանակահատվածում կրթահամալիրում անցկացվել է 3 ծառայողական քննություն, կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 1 գլխավոր և 1 կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայող և 10 սովորող:

Նշված ժամանակահատվածում բարձր առաջադիմության, սպորտային բնագավառում մրցանակային տեղեր գրավելու և բարեխիղճ ծառայության համար կրթահամալիրի սովորողներից

խրախուսվել են ընդհանուր թվով 66 սովորող, որից ՀՀ ոստիկանության պետի հրամանով 2 սովորող պարգևատրվել են ՀՀ դրամով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամաններով 59 սովորողի հայտարարվել է «Շնորհակալություն», 1 սովորողի կարգապահական տույժը հանվել է ժամկետից շուտ, և 4 սովորող պարգևատրվել են «Դինամո» ՄՀԿ նախագահի հրամանով «Առաջատար մարզիկ» մեդալով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ակադեմիայի 11 և քոլեջի 9 սովորողի խրախուսման կարգով նշանակվել է ՀՀ ոստիկանության պետի անվանական կրթաթոշակ:

2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչություն

Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժին

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի կողմից կոորդինացվել, կազմակերպվել և վերահսկվել է կրթահամալիրի ուսումնական գործընթացը:

- Բաժնի կողմից կազմվել են կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի և մագիստրատուրայի, ինչպես նաև քոլեջի կիսամյակային դասացուցակները, մինչև ակադեմիայի բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվող ակնարկային դասախոսությունների դասացուցակները: Կրթահամալիրի ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է սովորողների պրակտիկաների անցկացումը:
- Կազմվել և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցվելուց հետո կրթահամալիրի պետի հաստատմանն են ներկայացվել շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ժամանակացույցերը, որոնց համաձայն կրթահամալիրի ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը:
- Իրականացվել են 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի և 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կրթահամալիրում պայմանագրային հիմունքներով դասավանդող դասախոսների ուսումնական գործընթացում ներգրավելու աշխատանքները:
- Կազմվել և կրթահամալիրի պետի հաստատմանն են ներկայացվել կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցերը:
- Կազմվել և հաստատվել են կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային ուսումնական պլանները՝ ըստ կուրսերի և ուսուցման ձևերի:
- Պարբերաբար ստուգվել և վերահսկվել է ամբիոնների, կրթաճյուղերի կողմից ուսումնական բեռնվածության և ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքը:
- Պարբերաբար ստուգվել և վերահսկվել է ուսումնական ծրագրերի, առարկայական թեմատիկ պլանների, քննության համար անհրաժեշտ նյութերի /տոմսեր, հարցաշարեր/ լրամշակման և կազմման աշխատանքները:
- Ապահովվել է ֆակուլտետների կողմից քննաշրջանների ժամանակացույցերի կազմման և դրանք կրթահամալիրի պետի հաստատմանը ներկայացնելու գործընթացը:
- Կազմակերպվել և ստուգվել է կրթահամալիրի ակադեմիայի իրավաբանական և քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետների ամբիոններում դասավանդվող առարկաներից անբավարար գնահատականներ ստացած սովորողների համար իրականացված լրացուցիչ պարապմունքների անցկացման ընթացքը:
- Ապահովվել է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի և ձևաթղթերի ձեռքբերման գործընթացը:
- Ապահովվել է սովորողների առաջադիմության և հաճախումների հետ կապված /ամսական/ վերլուծական աշխատանքները:
- Ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի կողմից մշակվել և տպագրվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման և անցկացման «Մեթոդական խորհրդատվություն» ձեռնարկը:
- Բաժնի կողմից ապահովել են կրթահամալիրի ուսումնական գործընթացին վերաբերվող ներքին իրավական ակտերի մշակման և կազմման աշխատանքները:
- «ՀՀ ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի

կազմակերպման և վերահսկման բաժնի ընդհանուր գրադարանի 2 աշխատակիցները՝ 2018 թվականի ապրիլի 9-ից 20-ը և մայիսի 14-ից 25-ը համապատասխանաբար վերապատրաստման դասընթացներ են անցել «ՀՀ ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տարբեր բաժիններում՝ ծանոթանալով գրադարանային գործին և մատենավարության գործընթացին:

- Հաշվետու ժամանակահատվածում ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի, ՌԴ ՆԳՆ Նիժնի Նովգորոդի ակադեմիայի, ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մինսկի ակադեմիայի, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի ինստիտուտի և ՌԴ ՆԳՆ աշխատակիցների որակավորման բարձրացման համառուսաստանյան ինստիտուտի կողմից ոստիկանության կրթահամալիր են ուղարկվել մասնագիտական գրականություն և էլեկտրոնային սկավառակներ, որոնցով համալրվել է կրթահամալիրի ընդհանուր գրադարանի գրքային ֆոնդը:
- Բաժնին ենթակա ընդհանուր գրադարանը 12 ամիսների ընթացքում համալրվել է՝

- 225 անուն /474 օրինակ/ մասնագիտական
- 107 անուն /117 օրինակ/ գեղարվեստական գրականությամբ և
- 9 անուն /28 օրինակ/ էլեկտրոնային սկավառակներով:

Միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին

Բաժնի կողմից կազմակերպվել և ապահովվել է հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. Հունվարի 29-ից փետրվարի 2-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատվիրակության ճանաչողական այցը Վրաստանի ՆԳՆ ակադեմիա,/5-ծառայող/
2. Մարտի 26-ից 28-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի Լեհաստանի Հանրապետության Կրակով քաղաքում Եվրոպական Հանձնաժողովի կողմից նախաձեռնված Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության շրջանակներում անցկացված «Փորձագիտական հավատարմագրման գործընթաց» թեմայով աշխատաժողովին մասնակցությունը,
3. Մարտի 28-ից ապրիլի 6-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի երկու ներկայացուցիչների մասնակցությունը ՌԴ ՆԳՆ Վոլգոգրադի ակադեմիայում կազմակերպված «Դեպքի վայրի զննություն» թեմայով դասընթացին,
4. Ապրիլի 11-ից 13-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի կողմից ուսանողների համար կազմակերպված «Գիտության և պրակտիկայի արդիական հարցերը» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովին,
5. Ապրիլի 25-ից 27-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ Օմսկի ակադեմիայի կողմից ուսանողների համար կազմակերպված «Մարդ: Հասարակություն: Իրավունք:» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովին,
6. Մայիսի 10-ից 12-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը Վոլգոգրադի ակադեմիայում կազմակերպված «Քրեական օրենսդրության արդի խնդիրները ժամանակակից փուլում» V միջազգային գիտագործնական համաժողովին:
7. Սեպտեմբերի 13-ից 15-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը Ղրղզստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի ռեկտորների ամենամյա հավաքին,
8. Սեպտեմբերի 24-26-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի Քննությունների դաշնային բյուրոյի ազգային ակադեմիայի Ֆինլանդիայի Հելսինկի քաղաքում կազմակերպված վերապատրաստման դասընթացին,
9. Հոկտեմբերի 8-ից 18-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը Չինաստանի ոստիկանության ազգային ակադեմիայում «Գլոբալ անվտանգության

կառավարման ընդլայնում և ոստիկանության կրթության բնագավառում համագործակցության խթանում» համաժողովին,

10. Հոկտեմբերի 28-ից 29-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը Հունգարիայի իրավապահ գործունեության միջազգային ակադեմիայում կազմակերպված «Մարդկանց թրաֆիքինգ» թեմայով դասընթացին:

Բաժինն ապահովել է կրթահամալիրի ներկայացուցիչների մասնկացությունը հետևյալ դասընթացներին.

1. Մարտի 12-ից 14-ը ՀՀ Արդարադատության ակադեմիայում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության /ԹՊԻՀ/ գրասենյակի և ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի կողմից կազմակերպված «Կազմակերպված հանցավորության բացահայտում և քննություն» թեմայով դասընթաց,
2. Մարտի 21-ից 22-ը «Անի Պլազա» հյուրանոցում Եվրոպայի խորհրդի տնօրինության և ՀՀ ոստիկանության համատեղ կազմակերպած «Ահաբեկչության դեմ պայքարի ուժեղացման համատեքստում հիմնարար իրավունքների և ազատությունների հարգանքը» թեմայով դասընթաց,
3. Հունիսի 21-ին հայ-ֆրանսիական ոստիկանական համագործակցության շրջանակներում ներքին անվտանգության հարցերով կցորդի կողմից «Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն» թեմայով դասընթաց կրթահամալիրում,
4. Սեպտեմբերի 14-ին «Անի Պլազա» հյուրանոցում ԵԱՀԿ Անդրազգային վարչության կողմից կազմակերպված «Օպերատիվ տվյալների վրա հիմնված ոստիկանական գործունեությունը և դրա աջակցությունը համայնքային ոստիկանությանը» թեմայով դասախոսության անցկացում,
5. Հոկտեմբերի 29-ից 30-ը Ծաղկաձորում Եվրոպայի Խորհրդի երևանյան գրասենյակի կողմից անցկացված «Ընտանեկան բռնության դեմ պայքար» թեմայով դասընթաց,
6. Դեկտեմբերի 10-ից 14-ը Արդարադատության ակադեմիայում ԱՄՆ դեսպանության կողմից կազմակերպված «Կանայք արդարադատության ոլորտում» թեմայով դասընթաց,
7. ԱՄՆ դեսպանատան կողմից «Կրիմինալիստիկա» առարկայի շրջանակներում թվով 4 դասընթացների անցկացումը կրթահամալիրում:

Բաժինը կազմակերպել է նաև.

- փետրվարի 20-ին ԵԱՀԿ Անդրազգային սպառնալիքների ստորաբաժանման ոստիկանության ռազմավարական հարցերով բաժնի ճանաչողական այցը ՀՀ ոստիկանության կրթահամալիր,
- ապրիլի 5-ին Եվրոպայի խորհրդի պատվիրակության ճանաչողական այցը ՀՀ ոստիկանության կրթահամալիր,
- մայիսի 25-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի երկու ծառայողների մասնակցությունը Տաջիկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայում անցկացված հեռակա համաժողովին,
- մայիսի 30-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը ՌԴ Նիժնի Նովգորոդի ակադեմիայի կողմից անցկացված առցանց ամենամյա գիտահետազոտական միջազգային մրցույթին,
- ապրիլի 19-ին Մոլդովայի Հանրապետության ՆԳՆ Շտեֆան Չել Մառեյի ակադեմիայի հետ համագործակցության արձանագրության ստորագրում,
- սեպտեմբերի 10-ին Ղազախստանի Հանրապետության ՆԳՆ Ալմաթայի Մ. Եսբուլատովի անվան ակադեմիայի հետ համագործակցության արձանագրության ստորագրում,
- Ուկրաինայի Ներքին գործերի Օդեսայի պետական համալսարանի հետ համագործակցության արձանագրություն ստորագրելու ուղղությամբ աշխատանքների կազմակեպում,
- հունիսի 26-ից 28-ը «Ոստիկանության տեղը և դերը պետական կառավարման համակարգում» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովի կազմակերպում և անցկացում, որին մասնակցել են ՌԴ ՆԳՆ թվով 7 ուսումնական հաստատությունների և Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի ինստիտուտի ներկայացուցիչները,

- հոկտեմբերի 24-ին կրթահամալիրի ներկայացուցչի մասնակցությունը ՌԴ ՆԳՆ Կառավարման ակադեմիայում անցկացվող «ԱՊՀ երկրների փոխհամագործակցությունը հանցավորության դեմ պայքարի ոլորտում. ժամանակակից կարգավիճակն ու զարգացման ռազմավարական ուղղությունները» թեմայով միջազգային գիտագործնական հեռահար համաժողովին,
- նոյեմբերի 21-ին ՌԴ ՆԳՆ Նիժնի Նովգորոդի ակադեմիայում կայացած առցանց դասախոսությանը կրթահամալիրի ներկայացուցիչների մասնակցությունը,
- նոյեմբերի 7-ից 8-ը ԵՈՔԱ գործադիր կոմիտեի 2018թ. նիստի անցկացումը կրթահամալիրում,
- Աշխատանքներ են իրականացվել ԵԱՀԿ ինտերնետային ոստիկանական ակադեմիաների ցանցի ստեղծման ուղղությամբ, անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու միջոցով:
- կազմակերպել և ապահովվել է «Կրթություն XXI դար» EXPO 2018 18-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին կրթահամալիրի մասնակցությունը,
- ապահովվել է «edupolice.am» կայք-էջի տեղեկատվական համալրվածությունը, կրթահամալիրում տեղի ունեցող գիտական, մշակութային և այլ բնույթի տեղեկությունների լուսաբանումը (անհրաժեշտության դեպքում նաև անգլերեն և ռուսերեն թարգմանություններով):
- պատշաճ կերպով պատասխաններ են ուղարկվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային փոստով ստացված թվով 117 տեղեկատվական հարցումներին:

3. Գիտական աշխատանքների բաժին

1. 2018 թվականի հունվար ամսին ասպիրանտուրայի ընդունելության վերաբերյալ գրություններ են ուղարկվել ոստիկանության ստորաբաժանումներ, որի արդյունքում ներկայացվել են 2 հայտեր:
2. 2018 թվականի հունվար ամսին գիտբաժին է ներկայացվել տեղեկանքներ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ 2 ասպիրանտի ատենախոսության թեմաները հաստատվելու և գիտական ղեկավարներ նշանակվելու վերաբերյալ:
3. Գիտբաժնի կողմից կազմակերպվել է կրթահամալիրի ասպիրանտների 2017-2018 ուստարվա 2-րդ և 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակների պարտադիր և ընտրովի դասընթացների անցկացումը (կազմվել են դասընթացների դասացուցակներ, ստուգարքների և քննության գրաֆիկը, քննական և ստուգարքային տեղեկագրերը, դասընթացների մատյանը), Կրթահամալիրի 5 ասպիրանտների հետ անցկացվել է խորհրդակցություն:
4. Գիտբաժնի կողմից նախապատրաստվել և կրթահամալիրի որակի ապահովման բաժանմունքին է ներկայացվել գիտբաժնի կարողությունների վերաբերյալ ինքնավերլուծություն:
5. Գիտբաժինը մասնակցել է «Կրթություն XXI դար» խորագրով միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին:
6. Գիտական աշխատանքների բաժնի կողմից 2018 թվականի ընթացքում «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի 5-րդ և 6-րդ համարներում հրատարակվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թվով 9 դասախոսների և 1 մագիստրանտի գիտական հոդվածները:
7. Գիտբաժնի պետը ընդգրկվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ 169-Ա հրամանով ստեղծված աշխատաքային խմբի մեջ, որի հիման վրա գիտբաժինը մասնակցել է «Ոստիկանության տեղը և դերը պետական կառավարման համակարգում» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովի կազմակերպման և իրականցման աշխատանքներին:
8. Գիտբաժնի կողմից տարբեր հրատարակումների համար տրվել է 5 երաշխավորություններ:
9. «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի ՀՀ ոստիկանության 100-ամյակին նվիրված 5-րդ հոբելյանական և 6-րդ համարների հրատարակչության հետ կապված կատարվել են հետևյալ աշխատանքները՝
   - Հավաքվել է 27 գիտական հոդվածներ,
   - Կատարվել են սրբագրման աշխատանքները,

- Կազմվել է ֆինանսական հաշվետվություն,
- Ամսագրերը ներկայացվել է տպագրության,
- Կատարվել են առաքման աշխատանքները,
- Ամսագրերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել է կայքում:

10.Համակարգվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ամբիոնների գիտական գործունեությունը և գիտական խմբակների աշխատանքները, գիտբաժնի գիտաշխատողները մասնակցել են գիտական խմբակների բոլոր նիստերին:

11. 2018 թվականի մայիսի 15-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կայացել է «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և դրա կանխարգելումը» թեմայով կլոր սեղան-քննարկում, որը կազմակերպվել էր Կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի կողմից: Միջոցառմանը մասնակցեցել են ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի և ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

12.Հայաստանի Հանրապետության անկախության 100-ամյակին ընդառաջ 2018 թվականի մայիսի 25-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ կրթահամալիրում կազմակերպվել է «Հայոց պետականության մարտահրավերները 21-րդ դարում. արագ փոփոխվող իրականություն և պետահրավական ռազմավարություն» խորագրով հանդիպում ոլորտի մասնագետի հետ:

13.2018 թվականի հուլիս ամսին գիտբաժնի կողմից կազմակերպվել է կրթահամալիրի ասպիրանտների տարեկան ատեստացիան:

14.ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 2016 թվականի փետրվարի 17-ի թիվ 69-Ա հրամանի 4-րդ կետի համաձայն գիտական աշխատանքների բաժնի կողմից իրականացվել են կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ամբիոնների կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփման և գնահատման աշխատանքները: Արդյունքում լավագույն ճանաչված ամբիոնին շնորհվել է շնորհակալագիր և փոխանցիկ խորհրդանիշ:

15.Գիտբաժնի կողմից կազմվել և ներկայացվել է հաստատման ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խմբակների 2018-2019 ուստարվա ընդհանուր աշխատանքների պլանը, համակարգվել է գիտական խմբակների նոր կազմը:

16.Սույն թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում գիտբաժնի կողմից կազմակերպվել է «Իրավունքի չարաշահման հիմնահարցերը» թեմայով գիտական սեմինար:

17.Կազմակերպվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելությունը, արդյունքում ընդունվել է 1 դիմորդ:

18. Գիտբաժնի պետը մասնակցել է Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքներին, որի ընթացքում ներկայացրել է 2 իրավական ակտերի նախագծեր և այլ նախագծերի վերաբերյալ առաջարկություններ:

19. Գիտբաժնի անձնակազմը մասնակցել է «Ոստիկանության դերը ընտանիքում բռնության կանխարգելման գործընթացում» և «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունման 70-ամյակին ընդառաջ խորագրերով կլոր սեղան-քննարկումներին:

20. Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել է 1 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնագործնական ձեռնարկ, 1 զրուցարան և 28 գիտական հոդվածներ:

4. Վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետ

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 08.12.2017թ. թիվ 3377-Ա և 15.12.2017թ. թիվ 3446-Ա հրամաններով հաստատված ժամանակացույցի՝ 2018թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել են վերապատրաստման դասընթացներ 34 խմբերի հետ, որոնցում ընգրկված են եղել թվով 538 ոստիկանության ծառայող:

Ի կատարումն «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ ոստիկանության պետի 13.05.2017թ. թիվ 1288-Ա հրամանի կազմակերպվել և

անցկացվել են ՀՀ ոստիկանության միջին խմբի պաշտոններում նշանակված ծառայողների եռամսյա վերապատրաստման դասընթացներ 4 խմբերի հետ /108 ծառայող/:

Ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 30.11.2017թ. թիվ 3302-Ա հրամանի պահանջների համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում նշված ժամանակահատվածում անցկացվել են մասնագիտական դասընթացներ՝ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գծով միջին խմբի պաշտոններ զբաղեցնող թվով 85 ծառայողի հետ, որոնք համապատասխանաբար ընդգրկված են եղել 3 խմբերում:

Միևնույն ժամանակ ի կատարումն <<Ոստիկանությունում ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ ոստիկանության պետի 22.07.17թ. թիվ 5-Ն որոշման և համապատասխան այլ հրամանների կազմակերպվել են անհատական վերապատրաստման դասընթացներ 11 խմբերի հետ /13 ծառայող/:

Ի կատարումն ՀՀ ոստիկանության պետի 06.02.2018թ. թիվ 335-Ա հրամանի՝ 2018 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ ոստիկանության Արագածոտնի և Կոտայքի մարզային վարչությունների փորձաքրեագիտական խմբերի փորձագետների հետ՝ 2 խումբ:

Ինչպես նաև ի կատարումն ՀՀ ոստիկանության պետի 05.04.2018թ. թիվ 1089-Ա հրամանի՝ հաշվետու ժամանակահատվածում, ՀՀ ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստվել են անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի, բաժանմունքների /խմբերի/ ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող թվով 170 ծառայող /8 խումբ/:

Միաժամանակ 2018 թվականի ընթացքում վերապատրաստման ֆակուլտետում ԱՄՆ դեսպանատան կողմից անցկացվել են դասընթացներ <<Կրիմինալիստիկա>> առարկայի շրջանակներում՝ <<Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտում>> թեմայով՝ քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների և <<Բանավոր պատկերի>> մեթոդիկայի կիրառումը օպերատիվ-հետախուզական գործունեությունում>> թեմայով՝ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության և անչափահասների գործերով օպերատիվ ծառայողների /ՔՀ բաժանմունքի պետի տեղակալ, ՔՀ և ԱԳ ՀԿԳ ավագ օպերլիազոր, ավագ օպերլիազոր, օպերլիազոր/ հետ:

Վերապատրաստման գործընթացը արդյունավետ և որակյալ կազմակերպելու նպատակով դասախոսներ են հրավիրվել հասարակական կազմակերպությունների և ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների փորձառու ծառայողներ: Դասընթացների ավարտից հետո համալիր ստուգարքների, դիֆստուգարքների, քննությունների միջոցով անցկացվել են վերապատրաստվողների ամփոփիչ ստուգումներ և գնահատում, դրանց դրական արդյունքների դեպքում նրանց տրվել են ՀՀ ոստիկանության պետի հրամանով հաստատված վկայականներ:

ՀՀ ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների և կրթահամալիրի համապատասխան ամբիոնների հետ համատեղ 2018 թվականին կազմվել և վերահաստատվել են ֆակուլտետում վերապատրաստվող բոլոր խմբերի ուսումնական և առարկայական թեմատիկ պլանները:

Այսպիսով 2018 թվականի ընթացքում ֆակուլտետում անցկացված վերապատրաստման դասընթացներում ընդգրկված են եղել 916 ծառայող, նախորդ տարվա 636 –ի փոխարեն, իսկ ըստ խմբերի՝ 62 խումբ 2017 թվականի 43 խմբի փոխարեն:

5. Ակադեմիա

Իրավագիտության ֆակուլտետ

2018թ. հունվար-մարտ ամիսներին կազմակերպվել և իրականացվել է 2017-2018թթ. ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի առկա անվճար ուսուցման քննաշրջանը, որին մասնակցել են թվով 129 սովորող, որից բոլոր քննություններից դրական գնահատականներ են ստացել 89 սովորող, *(1 (մեկ) սովորող ազատվել է ակադեմիայից անբավարար առաջադիմության հիմքով):* 1-ին վերահանձնմանը մասնակցել են 39 սովորող, դրական գնահատականներ են ստացել 28 սովորող, 2-րդ վերահանձնմանը մասնակցել են 11 սովորող: 10 սովորող ստացել են բոլոր քննություններից դրական գնահատականներ: *(1 (մեկ) սովորող ազատվել է ակադեմիայից անբավարար առաջադիմության հիմքով):* 2 սովորող ազատվել են ակադեմիայից իրենց դիմումների համաձայն, 1 նախկին սովորող վերականգվել է ակադեմիա: Այս պահի դրությամբ Կրթահամալիրի ակադեմիայի անվճար կրթաձևում սովորում են թվով *126 սովորող:*

2017թ. նույն ժամանակահատվածում (այսուհետ՝ ն.ժ.) քննաշրջանին մասնակցել են թվով 134 սովորող: *(1 (մեկ) սովորող ազատվել է ակադեմիայից անբավարար առաջադիմության հիմքով):*

2018թ. հունվար-մարտ ամիսներին կազմակերպվել և իրականացվել է 2017-2018թթ. ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման քննաշրջանը, որին մասնակցել են թվով 255 սովորող, որից 23 սովորողներ քննաշրջանի ընթացքում մեկնել են ժամկետային զինծառայության: 21 սովորող վերադաձել է ժամկետայի զինծառայությունից:

2 սովորող ազատվել են ակադեմիայից իրենց դիմումների համաձայն, 11 նախկին սովորող վերականգնվել է ակադեմիա: Այս պահի դրությամբ Կրթահամալիրի ակադեմիայի վճարովի կրթաձևում սովորում են թվով 239 սովորող:

2017թ. նույն ժամանակահատվածում (այսուհետ՝ ն.ժ.) մասնակցել են թվով 228 սովորող, որից 19 սովորողներ քննաշրջանի ընթացքում մեկնել են ժամկետային զինծառայության: 21 սովորող վերադաձել է ժամկետայի զինծառայությունից: Քննաշրջանի հիմնական և վերահանձնումների արդյունքում բոլոր սովորողները ստացել են դրական գնահատականներ:

Ի կատարումն ՀՀ ոստիկանության պետի 08.12.2017թ. թիվ 3391-Ա հրամանի՝ սահմանված ժամկետներում պատրաստվել և ՀՀ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումներ են ներկայացվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով առկա անվճար 3-րդ և առկա անվճար ու վճարովի 4-րդ կուրսի՝ համապատասխանաբար ուսումնական և արտադրական պրակտիկա անցնող սովորողների քանակական և անվանական հայտերը:

Ուսումնական և նախաավարտական պրակտիկաներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 30.01.2018 թվականի թիվ 41-Ա հրամանով պրակտիկայի ղեկավարներ են նշանակվել կրթահամալիրի ծառայողները: Ուսումնական պրակտիկան կազմակերպվել և անցկացվել է նախօրոք հաստատված ծրագրին համապատասխան: Որպես ուսումնական նախաավարտական պրակտիկաների ամփոփում ձև նախատեսված է պրակտիկայի պաշտպանություն, որն իրականացվել է 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ համապատասխան հրամաններով նախատեսված ուսումնական և արտադրական պրակտիկաների ավարտից հետո:

Հսկողություն է իրականացվել ուսումնական պարապմունքների հաշվառման մատյաններում, քննական տեղեկագրերում և թերթիկներում, ստուգման գրքույկներում սովորողների առաջադիմության խստիվ հաշվառման նկատմամբ:

2018թ. հունիսի 19-ից մեկնարկել է 2017-2018թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի առկա անվճար ուսուցման քննաշրջանը, որին մասնակցել են 92 սովորող (հաշվարկում ընդգրկված չէ 4-րդ կուրսը): Քննաշրջանի 1-ին փուլի արդյունքներով տարբեր կուրսերի 5 սովորող անբավարար առաջադիմության պատճառով հեռացվել են: Պետական ատեստավորմանը մասնակցել են 34 սովորող, որոնցից 1 սովորող չի ստացել բավարար գնահատական:

2018թ. հունիսի 6-ից մեկնարկել է 2017-2018թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման քննաշրջանը, որին մասնակցել են 206 սովորող (14 սովորող վերադարձել են ժամկետային զինծառայությունից) (հաշվարկում ընդգրկված չէ 4-րդ կուրսը): Քննաշրջանի 1-ին փուլի արդյունքներով տարբեր կուրսերի 5 սովորող անբավարար առաջադիմության պատճառով հեռացվել են: 1 սովորող ազատվել է սեփական դիմումի համաձայն: Պետական ատեստավորմանը մասնակցել են 45 սովորող: Նախորդ տարիներից պետական ատեստավորում չանցած 4 սովորող ևս մասնակցել են պետական ատեստավորմանը, որից 1-ը այս անգամ ևս չի ատեստավորվել:

2017-2018թթ. ուստարվա ակադեմիական պարտքերի վերահանձնման առաջին փուլը մեկնարկել է 2018 թվականի սեպտեմբերի 12-ից:

2-րդ վերահանձնմանը մասնակցել են 18 սովորողներ: 17 սովորողներ բոլոր քննություններից ստացել են դրական գնահատականներ: 1 սովորող ազատվել է ակադեմիայից անբավարար առաջադիմության պատճառով: 1 նախկին սովորող վերականգվել է ակադեմիա: 2018թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման բակալավրիատում սովորում են 117 սովորողներ: 2017թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման բակալավրիատում սովորել են 129 սովորողներ:

Իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման բակալավրիատի ակադեմիական պարտքերի վերահանձնման առաջին փուլին մասնակցել են 76 սովորողներ, որոնցից բոլոր քննություններից դրական գնահատականներ են ստացել 42 սովորողներ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել են 32 սովորողներ: 2 սովորողներ ազատվել են սեփական դիմումի համաձայն: 1 սովորող ազատվել է անբավարար առաջադիմության պատճառով:

14 սովորողներ վերադաձել են ժամկետային զինծառայությունից, որոնցից 8 մասնակցել են քննաշրջանին, 1՝ 1-ին վերահանձնմանը, որոնցից բոլոր քննություններից դրական գնահատականներ են ստացել 7 սովորողներ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է 1 սովորող, 1 սովորող ազատվել է անբավարար առաջադիմության պատճառով:

2018թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման բակալավրիատում սովորում են 208 սովորողներ: 2017-ի ն/ժ դեկտեմբերի 26-ի դրությամբ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման բակալավրիատում սովորել են 234 սովորողներ:

Հեռակա ֆակուլտետ

2018 թվականի փետրվարին կազմակերպվել և իրականացվել է 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առաջացած ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնումը, որին մասնակցել են 5 սովորող (1-ին կուրսից՝ 4 սովորող, 3-րդ կուրսից՝ 1 սովորող): Բոլորը ստացել են դրական գնահատականներ:

Ն.ժ. 2017 թ. մասնակցել են 18 սովորող, որից դրական են ստացել 16, իսկ 2 սովորող նույն առարկայից երեք անգամ անբավարար գնահատականներ ստանալու պատճառով ազատվել են ակադեմիայից:

2018 թվականի փետրվարից սկսվել է հեռակա ուսուցման ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնաքննական հավաքը, որին մասնակցել է 270 սովորող, այդ թվում՝ 3-րդ և 4-րդ կուրսերում վերականգնված 3 սովորող:

Ն.ժ. 2017 թ. ուսումնաքննական հավաքին մասնակցել է 260 սովորող:

2018 թվականի փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվել և իրականացվել է 5-րդ կուրսի ուստիկանության կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայող սովորողների նախաավարտական պրակտիկան, որին մասնակցել են 9 սովորող:

Ն.ժ. 2017 թ. նախաավարտական պրակտիկային մասնակցել են 28 սովորող:

2018թ. 1-ին եռամսյակում ավարտվել է 4-րդ կուրսի ուսումնաքննական հավաքը: Քննաշրջանի հիմնական փուլում 36 սովորող ստացել են դրական գնահատականներ, 9-ը սովորող ստացել են անբավարար գնահատականներ, որոնցից 1 սովորող երեք առարկայից անբավարար գնահատականներ ստանալու պատճառով ազատվել է ակադեմիայից: 2018 թվականի ապրիլին կազմակերպվել և իրականացվել է 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքում առաջացած ակադեմիական պարտքերի մարման 1-ին վերահանձնումը, որին մասնակցել են 8 սովորող և ստացել դրական գնահատականներ:

Ն.ժ. 2017 թ. 4-րդ կուրսի քննաշրջանին մասնակցել են 39 սովորող, որից 10-ը սովորող ստացել են անբավարար գնահատականներ, այդ թվում՝ 2 սովորող 3 տարբեր առարկաներից անբավարար գնահատականներ ստանալու պատճառով ազատվել են ակադեմիայից: Վերահանձնման արդյունքում 8 սովորող ստացել են դրական գանահատականներ:/

1 սովորող 2018 թվականի մայիսին վերականգնվել է 1-ին կուրսում:

2018 թվականի հունիսին ավարտվել են 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի ուսումնաքննական հավաքները:

1-ին կուրսում 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել են 67 սովորող: Քննաշրջանի հիմնական փուլում 23 սովորող ստացել են անբավարար գնահատականներ, այդ թվում՝ 7 սովորող 2-ական առարկաներից:

Ն.ժ. 2017 թ. 1-ին կուրսի քննաշրջանին մասնակցել են 67 սովորող և բոլորը ստացել դրական գնահատականներ:

2-րդ կուրսում 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել են 66 սովորող: Քննաշրջանի հիմնական փուլում 1 սովորող հարգելի պատճառով չի ներկայացել 1 առարկայի ստուգարքին և 1 առարկայի քննությանը, իսկ 1 սովորող անհարգելի պատճառով չի ներկայացել 1 առարկայի քննությանը:

Ն.ժ. 2017 թ. 2-րդ կուրսի քննաշրջանին մասնակցել են 55 սովորող, որից 7 սովորող ստացել են անբավարար գնահատականներ, վերահանձնման արդյունքում բոլորը ստացել են դրական գանահատականներ:

3-րդ կուրսում 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի հիմնական փուլում բոլորը ստացել են դրական գնահատականներ:

Ն.ժ. 2017թ. 3-րդ կուրսի քննաշրջանին մասնակցել են 45 սովորող, որից 1 սովորող չի ներկայացրել կուրսային աշխատանքը և ուստիկանությունում ծառայությունից ազատվելու պատճառով ազատվել է ակադեմիայից:

2018 թվականի հունիսին կազմակերպվել և իրականացվել է ավարտական 5-րդ կուրսի ուստիկանության կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայող սովորողների համար նախատեսված նախաավարտական պրակտիկայի պաշտպանությունը, որին մասնակցել են 9 սովորող և ստացել դրական գնահատականներ:

Ն.ժ. 2017թ. նախաավարտական պրակտիկայի պաշտպանությանը մասնակցել են 28 սովորող և ստացել դրական գնահատականներ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի բակալավրիատի 37 շրջանավարտներին և նախորդ ուստարվա 2 շրջանավարտներին թույլատրվել է մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը և վերաատեստավորմանը:

Նշված ժամանակահատվածում հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսանում է 270 սովորող, այդ թվում՝

1-ին կուրսում՝ 67 սովորող,

2-րդ կուրսում՝ 66 սովորող,

3-րդ կուրսում՝ 56 սովորող,

4-րդ կուրսում՝ 44 սովորող,

5-րդ կուրսում՝ 37 սովորող (ամփոփիչ ատեստավորում):

2018 թվականի հուլիսին 37 շրջանավարտներից 33-ը անցել են ամփոփիչ ատեստավորումը, այդ թվում՝ 3-ը արժանացել են գերազանցության դիպլոմի, 1-ը չի ներկայացել հարգելի հիմքով, 3-ը չեն անցել ամփոփիչ ատեստավորումը, և նախորդ ուստարվա 2 շրջանավարտներ անցել են ամփոփիչ վերաատեստավորումը:

/Ն.ժ. 2017թ. 56 շրջանավարտներից 54-ը անցել են ամփոփիչ ատեստավորումը, այդ թվում՝ 3-ը արժանացել են գերազանցության դիպլոմի, իսկ 2-ը՝ չեն անցել ամփոփիչ ատեստավորումը:

2018 թվականի հուլիսին 2017-2018 ուստարվա ուսումնական քննաշրջանների արդյունքների հիման վրա ուսումնական պլաններն ամբողջությամբ կատարած և սահմանված ժամկետում ակադեմիական պարտքերը մարելու պայմանով հեռակա ուսուցման ֆակուլտետի բակալավրիատի թվով 233 սովորողներ փոխադրվել են՝

1-ին կուրսից 2-րդ կուրս 67 սովորող,(ակադեմիական պարտք 5 սովորող)

2-րդ կուրսից 3-րդ կուրս 66 սովորող,

3-րդ կուրսից 4-րդ կուրս 56 սովորող,

4-րդ կուրսից 5-րդ կուրս 44 սովորող:

/Ն.ժ. 2017թ. կուրսից կուրս փոխադրվել են 203 սովորող:

2018թ. սեպտեմբերի 10-ից սկսվել են հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաքննական հավաքները:

2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին 4-րդ կուրսից 1 սովորող ոստիկանությունում ծառայությունից ազատվելու պատճառով, 1-ը՝ անձնական նախաձեռնությամբ ազատվել են կրթահամալիրի ակադեմիայից:

1-ին կուրսից 1 սովորող ոստիկանությունում ծառայությունից ազատվելու պատճառով ազատվել է կրթահամալիրի ակադեմիայից, իսկ 3 սովորող անբավարար առաջադիմության հիմքով ներկայացվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայից ազատելու նպատակով:

2018 թվականի երկրորդ կիսամյակում հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսանում է 227 սովորող, այդ թվում՝

2-րդ կուրս՝ 63 սովորող,

3-րդ կուրս՝ 66 սովորող,

4-րդ կուրս՝ 54 սովորող,

5-րդ կուրս՝ 44 սովորող:

Ֆակուլտետի կողմից իրականացվում է մշտական հսկողություն ուսումնական գործընթացի իրականացման ընթացքի, սովորողների ընթացիկ հաճախումների և առաջադիմության նկատմամբ:

Ֆակուլտետի կողմից իրականացվում է մշտական հսկողություն ուսումնական գործընթացի իրականացման ընթացքի, սովորողների ընթացիկ հաճախումների և առաջադիմության նկատմամբ: 2018թ.հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուսումնաքննական հավաքին ըստ կուրսերի մասնակցել են.

5-րդ կուրսից՝44 սովորող, որոնցից 9 սովորող քննաշրջանի ընթացքում ստացել են անբավարար գնահատական, այդ թվում չորսը երկու առարկայից:

/Ն.ժ 2017թ. 5-րդ կուրսից 37 սովորող, որոնցից չորսը չեն հանձնել ստուգարք «Դատական հոգեբուժություն» առարկայից/:

4-րդ կուրսից՝ 54 սովորող, որոնցից 12 սովորող քննաշրջանի ընթացքում ստացել են անբավարար գնահատական, այդ թվում երկուսը երկու առարկայից:

/Ն.ժ.2017թ. 4-րդ կուրսի 45 սովորողներից /այդ թվում մեկ սովորող ոստիկանությունում ծառայությունից ազատվելու հիմքով ազատվել է կրթահամալիրից/, երկուսը մեկ առարկայից ստացել են անբավարար գնահատական:

3-րդ կուրսից՝ 67 սովորող, այդ թվում մեկ սովորող վերականգնվել է 3-րդ կուրսում և քննաշրջանի ընթացքում վեց սովորող ստացել են անբավարար գնահատական, որոնցից մեկը երկու առարկայից: Մեկ սովորող հարգելի պատճառով չի մասնակցել մեկ քննությանը, իսկ մեկ սովորող ևս հարգելի պատճառով չի ներկայացել կուրսային աշխատանքի պաշտպանությանը և չորս առարկաների ստուգարքներին:

/Ն.ժ.2017թ. 3-րդ կուրսի 54 սովորողներից մեկ սովորող չի ներկայացել ստուգարքի/:

2-րդ կուրսից՝63 սովորող, որոնցից 22 սովորող քննաշրջանի ընթացքում ստացել են անբավարար գնահատականներ, այդ թվում երկու սովորող՝ երեք առարկայից և ազատվել են կրթահամալիրից:

/Ն.ժ.2017թ. 2-րդ կուրսի 66 սովորողներից անբավարար գնահատական են ստացել 14 սովորող, որոնցից երեքը երկու առարկայից/:

2018-2019 ուստարվա ընդունելության քննությունների արդյունքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով նոյեմբերի 2-ին ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետի բակալավրիատի առաջին կուրս են ընդունվել թվով 48 դիմորդ /24 բարձրագույն կրթությամբ և 24 միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթությամբ/:

/Ն.ժ.2017թ.1-ին կուրս են ընդունվել 67 դիմորդ/:

2018 թվականի նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 3-ը կազմակերպվել է 4-րդ և 5-րդ կուրսերի սովորողների առաջին վերահանձնումը: Բոլորը ստացել են դրական գնահատականներ:

/Ն.ժ.2017թ.դեկտեմբերին կազմակերպվել է 5-րդ, 4-րդ և 2-րդ կուրսերի ակադեմիական պարտքերի վերահանձնումը: Բոլորը ստացել են դրական գնահատական/:

2018 թվականի դեկտեմբերի 21-ի դրությամբ հեռակա ուսուցման ֆակուլտետում սովորում են 274 սովորող, այդ թվում՝

1-ին կուրսում՝ 48 սովորող

2-րդ կուրսում՝ 61 սովորող

3-րդ կուրսում՝ 67 սովորող

4-րդ կուրսում՝ 54 սովորող

5-րդ կուրսում՝ 44 սովորող:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին կուրսի քննաշրջանը սկսվում է դեկտեմբերի 24-ից 26-ը ներառյալ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի կողմից ամենօրյա հսկողություն է իրականացվում ուսումնական գործընթացի, սովորողների հաճախումների և առաջադիմության նկատմամբ: Յուրաքանչյուր ուսումնաքննական հավաքից հետո համապատասխան ստորաբաժանում է ուղարկվում հեռակա ուսուցման ֆակուլտետի սովորողի հաճախումների և առաջադիմության մասին տեղեկանք:

ՈԶ հրամանատարական ֆակուլտետ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ոստիկանության զորքերի հրամանատարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել է «Համազորային պատրաստության» դասընթաց Երևան քաղաքի վարչության և ենթակա ստորաբաժանումների ծառայողների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության զորքերի ավագ և կրտսեր սպայական կազմերի պաշտոններ զբավեցնող զինծառայողների հետ: Հաշվետու ժամանակահատվածում «Համազորային պատրաստության» դասընթացին մասնակցել են թվով 4 խումբ՝ յուրաքանչյուր խմբում 10-ական ծառայող, իսկ ՀՀ ոստիկանության զորքերի ավագ և կրտսեր սպայական կազմերի պաշտոններ զբաղեցնող 1 խումբ՝ 11 զինծառայող:

2017թվականի ն.ժ խումբ չի եղել:

Վերապատրաստման դասընթացները կազմակերպվել են համաձայն հրամանների, հաստատված ուսումնական առարկայական թեմատիկ պլանների և դասացուցակի: Գործնական պարապմունքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են պարապմունքներ՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ սպառազինությանը և տեխնիկային ծանոթանալու համար: Դասընթացն ավարտածներին հատկացվել են համապատասխան վկայականներ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Պաշտպանության նախարարության հետ՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Սակրավորային պատրաստության» դասընթացներ կազմակերպելու համար: Վերոգրյալից ելնելով՝ ստեղծվել է սակրավորային պատրաստության լսարան, ձեռք են բերվել համապատասխան ուսումնական նյութատեխնիկական միջոցներ:

Սեպտեմբերի 24-ից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՈՋ հրամանատարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվում է «Համազորային պատրաստության» 5-րդ խմբի դասընթացը՝ թվով 10 ծառայողների հետ (2017թվականի ն/ժ խումբ չի եղել):

Մագիստրատուրայի բաժանմունք

2018 թվականի հունվար ամսվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել է առկա ուսուցման սովորողների քննաշրջանը, որի արդյունքում՝ 1-ին կուրսի 8 սովորողից 7-ը ստացել են դրական գնահատականներ, մեկ սովորող անհարգելի պատճառով չի ներկայացել մեկ առարկայի քննությանը, իսկ 2-րդ կուրսի 11 սովորողից 10-ը ստացել են դրական գնահատականներ, մեկ սովորող մեկ առարկայի քննությունից ստացել է անբավարար գնահատական: Մարտ ամսվա ընթացքում կազմակերպվել է ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումները, որոնց արդյունքում բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: Ստուգարքների և քննությունների հանձնման արդյունքում մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսում սովորողների առաջադիմության միջին միավորը կազմել է 14,69 (2017թ-ին՝ 11 սովորող - 18,9), իսկ երկրորդ կուրսում՝ 18,05 (2017թ-ին՝ 4 սովորող - 19,55):

Փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում կազմակերպվել է մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ՝ ավարտական կուրսի սովորողների (թվով 11 սովորող) գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները, որոնց ավարտին վերջիններս հանձնել են ստուգարքներ: Կազմվել է ստուգարքների հանձնման ժամանակացույցը և կազմակերպվել նշված գործընթացը:

2018 թվականի մարտի 5-ից ապրիլի 17-ը կազմակերպվել և անցկացվել է մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի (30 սովորող) 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնաքննական հավաքը: Քննաշրջանը դրական գնահատականներով ավարտել են 22 սովորող, մեկ սովորող հարգելի պատճառով չի ներկայացել 2 առարկայի քննությանը, 4 սովորող մեկական առարկայից ստացել են անբավարար գնահատական, իսկ 3 սովորող՝ անհարգելի պատճառով չեն ներկայացել երկուական քննության:

2017թ.-ի նույն ժամանակահատվածում մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի (21 սովորող) 2-րդ կիսամյակի քննաշրջանը դրական գնահատականներով են ավարտել 18 սովորող, իսկ 3 սովորող մեկական առարկայից ստացել են անբավարար գնահատական:

2018 թվականի մարտի 27-ից մայիսի 11-ը կազմակերպվել և անցկացվել է մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրսի /27 սովորող/ 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնաքննական հավաքը: Ընթացքում 3 սովորող ազատվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մագիստրատուրայից՝ երկուսն իրենց դիմումի համաձայն /վճարովի ուսուցում/, իսկ մեկը ազատվել է ՀՀ ոստիկանությունում ծառայությունից:

Քննաշրջանը դրական գնահատականներով ավարտել են 22 սովորող, մեկ սովորող հարգելի պատճառով չի ներկայացել 1 առարկայի քննությանը, իսկ մեկ սովորող մեկ առարկայից ստացել է «չստուգված»:

2017 թ.-ի նույն ժամանակահատվածում մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրսի 30 (սովորող) 2-րդ կիսամյակի քննաշրջանը դրական գնահատականներով են ավարտել 26 սովորող, իսկ 4 սովորող մեկ առարկայից ստացել են անբավարար գնահատական:

Հեռակա ուսուցման սովորողների ակադեմիական պարտքերի հանձնումները նախատեսված է կազմակերպել հուլիս ամսին:

2018թ.ի փետրվար - ապրիլ ամիսների ընթացքում կազմակերպվել է մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ՝ ավարտական կուրսի սովորողների (թվով 11 սովորող) գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները, որոնց ավարտին վերջիններս հանձնել են ստուգարքներ: Կազմվել է ստուգարքների հանձնման ժամանակացույց և կազմակերպվել նշված գործընթացը:

Մայիսի 24-ին տեղի է ունեցել առկա ուսուցման 2-րդ կուրսի սովորողների ամփոփիչ պետական ատեստավորումը, որի արդյունքում 11 շրջանավարտից 8-ը արժանացել են գերազանցության դիպլոմի:

2017թ.-ի նույն ժամանակահատվածում առկա ուսուցման բոլոր 4 շրջանավարտներն էլ արժանացել են գերազանցության դիպլոմի;

Առկա ուսուցման 1-ին կուրսի սովորողների 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի ստուգարքների հանձնման գործընթացն ընթացքի մեջ է, իսկ քննությունների հանձնումն նախատեսված է հուլիսի 6-ից:

1-ին կուրսում՝ առկա - 8 սովորող,
հեռակա - 24 սովորող (18-ը՝ անվճար, 6-ը՝ վճարովի),
2-րդ կուրսում՝ հեռակա - 30 սովորող (20-ը՝ անվճար, 10-ը՝ վճարովի):

2018-2019 ուսումնական տարում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա անվճար ուսուցման առաջին կուրս են ընդունվել ոստիկանության 10 ծառայող: Կազմակերպվել է նրանց գիտական թեզերի թեմաների ընտրության և ակադեմիայի խորհրդով թեմաների և գիտական ղեկավարների հաստատման գործընթացը:

Սեպտեմբեր ամսվա դրությամբ մագիստրատուրայում սովորում է՝

1-ին կուրսում՝ առկա - 10 սովորող,
հեռակա - 24 սովորող (18-ը՝ անվճար, 6-ը՝ վճարովի):
2-րդ կուրսում՝ առկա - 6 սովորող,
հեռակա - 28 սովորող (18-ը՝ անվճար, 10-ը՝ վճարովի):

Մագիստրատուրայի բաժանմունքի կողմից իրականացվում է մշտական հսկողություն ուսումնական գործընթացի ընթացքի, սովորողների ընթացիկ հաճախումների և առաջադիմության նկատմամբ:

5. Քոլեջ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի կողմից սահմանված կարգով իրականացվել են ուսումնական գործընթացի կազմակերպման և դրա նկատմամբ հսկողության գործառույթները: Պարբերաբար քննարկվել են սովորողների առաջադիմությունը, կատարվել են համեմատական վերլուծություններ նախորդ ՝ 2016-2017 ուստարվա հետ, 1-ին և 2-րդ կուրսի սովորողների հետ անցկացվել են հանդիպումներ, խորհրդակցություններ նրանց հուզող հարցերի շուրջ:

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ քոլեջի 1-ին կուրսի սովորողների թիվը կազմել է 42, ովքեր շարունակել են ուսուցումը 2-րդ կիսամյակում: 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 1-ին կուրսի 4 սովորող ցուցաբերել են գերազանց, 3 սովորող՝ լավ, 35 սովորող՝ բավարար առաջադիմություն, որոնցից 6-ը 1-ին վերահանձման արդյունքում ցուցաբերել են բավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.57, 2-րդ դասակ – 6.25:

/Ն.ժ. 2016 - 2017 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին կուրսի սովորողներից քննաշրջանին մասնակցել են 75-ը: Նրանցից 67-ը շարունակել են ուսուցումը 2-րդ կիսամյակում: Անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով 1-ին կուրսի 8 սովորողներ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ազատվել են Կրթահամալիրից, որոնցից 2-ը 2-րդ վերահանձմանը անբավարար ստանալու արդյունքում: Քննաշրջանի արդյունքներով 1-ին կիսամյակում 1-ին կուրսի 6 սովորող ցուցաբերել են գերազանց, 9 սովորող՝ լավ առաջադիմություն: 52 սովորող, որոնցից 26-ը առաջին վերահանձման, 3-ը երկրորդ վերահանձման արդյունքում, ցուցաբերել են բավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 5.73, 2-րդ դասակ - 5.91, 3-րդ դասակ - 5.94:/

2018թ. հունվարի 1-ի դրությամբ քոլեջի 2-րդ կուրսի սովորողների թիվը կազմել է 63 սովորող: 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանին մասնակցել են 64 սովորող. 63-ը շարունակել են ուսուցումը 2-րդ կիսամյակում: 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 6 սովորողներ ցուցաբերել են գերազանց, 9 սոովորող՝ լավ, 47 սովորող, որոնցից 14-ը առաջին վերահանձման, իսկ 2-ը 2-րդ վերահանձման արդյունքում ՝ բավարար առաջադիմություն, 1 սովորող անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով Կրթահամալիրի պետի 130-Ա 15.03.2018 հրամանով ազատվել է Կրթահամալիրից: Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.75, 2-րդ դասակ - 6.28, 3-րդ դասակ-6.53:

/Ն.ժ՝ 2016-2017 ուստարվա 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը՝ քննաշրջանին մասնակցել են 36 սովորող, որոնցից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 10 սովորող, 3 սովորող՝ լավ: 23 սովորող, որոնցից 11-ը առաջին վերահանձման, 1-ը երկրորդ վերահանձման արդյունքում ցուցաբերել են բավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 7.08, 2-րդ դասակ – 6.26:/

2017-2018 ուստարվա սկզբին 1-ին կիսամյակում, 2-րդ կուրսի 2-րդ դասակի սովորողներից մեկին տրամադրվել է ակադեմիական արձակուրդ, 2-րդ կիսամյակում մեկ սովորող ՀՀ ոստիկանության պետի հրամանով վերականգնվել է 2-րդ կուրսի 1-ին դասակում: 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 2-րդ կուրսի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը՝ քննաշրջանին մասնակցել են 63 սովորող, որոնցից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 6 սովորող, 6 սովորող՝ լավ:

Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.26, 2-րդ դասակ – 6.09, 3-րդ դասակ- 6.52:

/Ն.Ժ.2016-2017 ուստարվա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը՝ քննաշրջանին մասնակցել են 36 սովորող. 5 սովորող ցուցաբերել են գերազանց, 7 սովորող՝ լավ, 23 սովորող՝ բավարար առաջադիմություն: Մեկ սովորող անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով Կրթահամալիրի պետի հրամանով ազատվել է Կրթահամալիրից: Դասակների միջին առաջադիմությունը եղել է 1-ին դասակ՝ 6.62, 2-րդ դասակ - 7.2:/

2017-2018 ուստարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը՝ քննաշրջանին մասնակցել են 42 սովորող. 4 սովորող ցուցաբերել են գերազանց, 3 սովորող լավ, 33 սովորող բավարար առաջադիմություն: 2 սովորող անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով ազատվել են կրթահամալիրից: Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.07, 2-րդ դասակ – 5.78:

/Ն.Ժ.2016-2017 ուստարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը. քննաշրջանին մասնակցել են 67 սովորող. Քննաշրջանի արդյունքներով 7 սովորող ցուցաբերել են գերազանց, 4՝ լավ, 53՝ բավարար առաջադիմություն, 3 սովորող ցուցաբերել են անբավարար առաջադիմություն և ազատվել են կրթահամալիրից: Քննաշրջանի արդյունքներով դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.10, 2-րդ դասակ – 5.70, 3-րդ դասակ- 6.28:/

Ոստիկանական միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանով նախատեսված ուսուցման լրիվ դասընթացն ավարտած 61 շրջանավարտներ ամփոփիչ պետական ատեստավորումն անցել են «Քրեական իրավունք» և «Վարչական իրավունք և ոստիկանության վարչական գործունեություն» մոդուլներից քննություններ հանձնելու միջոցով: Քննությունների արդյունքում 6 սովորող ստացել են գերազանցության դիպլոմ, իսկ 1 սովորող չի ատեստավորվել:

6. Ուսումնական կենտրոն

2018թ. ընթացքում ուսումնական կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով թվով 224 սովորող /Ն/Ժ-2017 307/ ընդգրկվել է «Ոստիկան» որակավորման դասընթացներին: Նշված սովորողներից 8-ն ազատվել է ուսումնական կենտրոնից, որոնցից 4-ն անձնական նախաձեռնությամբ, 4-ն անբավարար առաջադիմություն ցուցաբերելու համար: Վերոնշյալ սովորողներից ուսումնական կենտրոնն ավարտել են 174-ը **/6 սովորող չեն անցել պետական ամփոփիչ ատեստավորումը և պետք է վերահանձնեն 2019թ. հունվար ամսին/**, ուսուցումը շարունակում են 36-ը /Ն/Ժ-2017 307**,** որից 8-ն ազատվել են ուսման ընթացքում՝ 4-ն անբավարար առաջադիմություն ցուցաբերելու համար, 4-ն անձնական նախաձեռնությամբ, ուսուցումը շարունակել են 72-ը/:
- Հսկողություն է իրականացվել ուսումնական պարապմունքների նկատմամբ և վերլուծվել պարապմունքների անցկացման որակն ու մեթոդիկան, որոնց վերաբերյալ մատյաններում կատարվել են համապատասխան գրառումներ:
- Մշտապես հսկողական աշխատանքներ են իրականացվել սովորողների ուսումնառության ընթացքի, հաճախումների, առաջադիմության և ուսման հետ կապված աշխատանքների կատարման նկատմամբ:
- Կազմակերպվել և իրականացվել է «Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների» ուսուցման գործընթացը. ընդհանուր թվով 194 աշխատակից / Ն/Ժ-2017 148/**:**
- Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 08.12.2017թ. թիվ 3377-Ա հրամանի ուսումնական կենտրոնում իրականացվել է կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստում՝ թվով 7 ուսումնական դասակում / Ն/Ժ-2017 4 դասակ/:

2018թ. ընթացքում ուսումնական կենտրոնում դասընթացներ են անցել ընդհանուր թվով 548 /544/ սովորողներ և աշխատակիցներ, որոնցից՝

- Կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստում՝ 130/ Ն/Ժ-2017 89/,
- Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցներ՝ 194 / Ն/Ժ-2017 148/:

7. Որակի ապահովման բաժանմունք

Հաշվետու ժամանակաշրջանում Կրթության որակի ապահովման բաժանմունքի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կազմվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծություն (ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 25-11-2017թ. թիվ 533-Ա հրաման): Կրթահամալիրի պետի համապատասխան հրամանի պահանջների համաձայն, պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան յուրքանչյուր խմբի կողմից կազմվել է վերլուծություն:
- Իրականացվել է ՄԿԾ-ի վերլուծություն, արդյունքները քննարկվել են կրթահամալիրի ստորաբաժանումների ղեկավարների հետ: Մասնավորապես, լիովին վերանայվել է Ոստիկանական միջին մասնագիտական կրթության չափորոշիչը և համապատասխանեցվել է համայնքային ոստիկանության գործունեությանը ներկայացվող պահանջներին:
- Իրականացվել է սոցիոլոգիական հարցում շրջանավարտների շրջանում նախկինում առկա խնդիրների բացահայտման և վերանայման նպատակով, ինչպես նաև հետագայում կազմվող հեռանկարային ծրագրերի ընթացքում ստացված տվյալները կիրառելու նպատակով:
- Հստակեցվել է բենչմարքինգի նպատակով մասնագիտական ուսումնական հաստատությունների ընտրման ընթացակարգը առկա փաստաթղթերի հիման վրա: 14. 02. 2018թ. կրթահամալիրի գիտական խորհրդի թիվ 2-րդ նիստում հաստատվել է բենչմարքինգի կազմակերպման և անցկացման ընթացակարգը, որի հիման վրա կազմվելու է գործընկեր երկրների հետ համեմատական վերլուծություն անցկացնելու ծրագիր:
- Իրականացվել է շահակիցների կարիքների և ինստիտուցիոնալ բարեփոխումների հետազոտություն: Ստացված տվյալները վերլուծվել են: Այս գործընթացը դեռևս չի ավարտվել և հաջորդ փուլը կիրականացվի 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում:
- Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի հետ իրականացվել է Կրթահամալիրի ռազմավարական պլանի ձևավորման ընթացակարգի մշակում: Վերջինս հաստատվել է կրթահամալիրի պետի կողմից:
- Մշակվել և ուսումնական հաստատությունների հետ քննարկվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման կարգը, որը ներկայացվել է կրթահամալիրի գիտական խորհրդի հաստատմանը:
- Ուսումնական հաստատությունների հետ աշխատանքներ են կատարվել ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներից ուսումնական գործընթացում հմուտ, համապատասխան փորձ ունեցող ծառայողների ներգրավելու համար և առաջարկությամբ դիմել ենք ՀՀ ոստիկանության շտաբ գործընթացը կազմակերպելու համար:
- Որակի ապահովման բաժանմունքի կողմից կազմվել և ստորաբաժանումներին է ներկայացվել ակադեմիայի բակալավրի մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը, որը պետք է քննարկվի և հաստատվի կրթահամալիրի գիտխորհրդում:
- Կազմվել է կրթահամալիրի կրթության որակի ապահովման ձեռնարկը, որը կդրվի ընդհանուր քննարկման կրթահամալիրի ստորաբաժանումների շրջանում:
- Անցկացվել են դասախոսի կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման և սովորողի մասնակցությունը բուհի կառավարման գործընթացին (ֆոկուս խմբային քննարկում) հարցումները և կատարվել է վերլուծություն:
- ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի և Վոլգոգրադի ակադեմիայի հետ ձեռք է բերվել նախնական համաձայնություն կրթական ծրագրերից մեկով համեմատական վերլուծություն և դասախոսների վերապատրաստում իրականացնելու համար:

8. Ծառայության բաժին

Համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի 2018թ.-ի 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի կողմից կատարվել են կազմակերպչական, դաստիարակչական, ծառայողական, մշակութային, տնտեսական և սպորտային միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում սովորողները ծանոթացել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի օրակարգին, իրենց ծառայողական և ուսումնական հարցերը կարգավորող հրամաններին ու հրահանգներին, կրթահամալիրի ներքին ծառայության վերակարգի ծառայությունը կարգավորող պարտականություններին ու աշխատակարգին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի ծառայողների կողմից սովորողների հետ անցկացվել են շարային, ինչպես նաև ՈՋ հատուկ տակտիկական պատրաստականության պարապմունքներ:

Թարմացվել է «Հավաք» ազդանշանով կրթահամալիրի հերթապահի առաջնահերթ գործողությունների վերաբերյալ հրահանգը, «Հավաք» ազդանշանի ժամանակ անձնակազմի ծանուցման սխեման, անձնակազմի հիշեցման թերթիկները, կրթահամալիրի օրակարգը, ինչպես նաև կրթահամալիրի «Արտակարգ իրավիճակներում գործելու» օրացուցային, «Տարահանման» պլանները: Կազմվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի բոլոր շենքերից տարահանման սխեմաները, որոնք փակցվել են յուրաքանչյուր հարկի տեսանելի վայրերում:

Հաշվետու ժամանակահատվածում համաձայն ՀՀ վարչապետի 27.10.2017թ-ի թիվ 1225-Ա որոշմամբ հաստատված ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման պլանի, ս/թ մարտի 13-ին ՀՀ ԱԻ նախարարության կողմից ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քաղաքացիական պաշտպանության վիճակը: Ուսումնասիրությունների ժամանակ թերություններ չեն հայտնաբերվել:

Հաշվետու ժամանակահատվածում «ՇԱՆԹ-2018» Ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունների /ՌՀՇՋ/ շրջանակներում ս/թ սեպտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության հերթապահ մասից տրվել է «Հավաք» իսկ ս/թ սեպտեմբերի 12-ին տրվել է «Տագնապ» ազդանշան, որոնց ժամանակ անձնակազմի ներկայությունն ապահովվել է 100%-ով: Նշված ազդանշանները ստանալուն պես իրականացվել են կրթահամալիրի խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանով նախատեսված միջոցառումները, որից հետո կազմված շարային, ինչպես նաև կատարված աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկանքները սահմանված կարգով և ժամկետում ուղարկվել են ՀՀ ոստիկանության ՋԱՔՊ բաժին:

Համաձայն կրթահամալիրի օրակարգի՝ յուրաքանչյուր ամսվա առաջին երկուշաբթի օրը, մշտական անձնակազմի հետ անցկացվել է շարային ստուգատես, որի ընթացքում ստուգվել է անձնակազմի արտաքին տեսքը, ծառայողական վկայականների և տագնապի պայուսակներում նախատեսված պարագաների առկայությունը, համազգեստի կրման կանոնները, վեր են հանվել թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանք վերացնելու ուղղությամբ:

Ամեն երկուշաբթի օր փոփոխական անձնակազմի հետ անցկացվել է շարային ստուգատես, որի ընթացքում ստուգվել է անձնակազմի արտաքին տեսքը, ծառայողական վկայականների առկայությունը, համազգեստի կրման կանոնները, վեր են հանվել թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանք վերացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ծառայության բաժնի ղեկավարությունը կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի սովորողների հետ անցկացրել է զրույցներ միջանձնային հարաբերությունների, բարոյահոգեբանական մթնոլորտի, էթիկայի և հայրենասիրության թեմաներով:

Հաշվետու ժամանակահատվածում ծառայության բաժնի ծառայողների զեկուցագրերի հիման վրա խրախուսվել են 91, կարգապահական տույժի են ենթարկվել 10 սովորողներ:

9. Տնտեսական բաժին

– Կազմակերպվել և իրականացվել է 2018թ. գնումների պլանով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, մատուցման և կատարման հայտերի կազմումը:

– Կազմակերպվել են կրթահամալիրի կարիքների համար 2018թ. առաջին եռամսյակին ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հանձնման ընդունման աշխատանքները:

– Կազմակերպվել է կրթահամալիրի տարածքների մաքրման, ծառերի էտման, այգիների մշակման և ոռոգման ջրագծերի վերանորոգման աշխատանքները:

– Կազմակերպվել և իրականացվել են կրթահամալիրի մշտական և փոփոխական անձնակազմին հանդերձանքով ապահովելու աշխատանքները:

– Կառուցվել,կահավորվել և հանձնվել է շահագործման ամբողջովին նոր հերթապահ մասի մասնաշենքը:

– Կազմակերպվել է կրթահամալիրի անձնակազմի գեղագիտական զարգացման, ուսումնամեթոդական տեսաֆիլմերի ցուցադրումը:

10. Քարտուղարություն

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քարտուղարության փաստաթղթաշրջանառությունն ունեցել է հետևյալ տեսքը:

- Ելք է արվել այլ ստորաբաժանումներ և այլ գերատեսչություններ ոչ գաղտնի-2454/ն.ժ. 2017թ - 2353/ և 460 գաղտնի /ն.ժ. 2017թ - 428/ փաստաթուղթ:
- Մուտք են արվել 1713 ոչ գաղտնի /ն.ժ. 2017թ - 1600/ և 684 գաղտնի /ն.ժ. 2017թ - 655/ փաստաթուղթ, ՀՀ ոստիկանության պետի անհատական հույժ գաղտնի հրաման 0 /ն.ժ. 2017թ - 2/,18 անհատական գաղտնի /ն.ժ. 2017թ. – 15/, 0 նորմատիվ գաղտնի /ն.ժ. 2017թ - 0/, 3 նորմատիվ ոչ գաղտնի /ն.ժ. 2017թ - 4/ ու 642 անհատական ոչ գաղտնի /ն.ժ. 2017թ - 550/ հրամաններ և 9 ոչ գաղտնի ցուցումներ /ն.ժ. 2017թ - 10/:
- Ստացվել է ՀՀ ոստիկանության պետի լոկալ 9-հրաման:
- Գրանցվել է 675 դիմում /ն.ժ. 2017թ – 900 դիմում/:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ